

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔ

Ով առաք պարգետող ամէն բարիքներու, աղքափները փարթամացնող, էապէս եւ մի՛շտ բարի, Հայրը մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի:

Քաղցրութեամբ նայէ քու անպիտան ծառայիդ, եւ թոյլ մի՛ փար որ չար Գավանը ինծի դէմ պատերազմի: Ես դեռ մանուկ եմ, եւ արհամարհուած: Դուն, որ ամենակարար զօրութիւնը եւ անսկիզբ էութիւնն ես, իմ ամրոցս եւ պատսպարանս եղիր, երբ անհիկա ինծի դէմ կը պատերազմի: Դուն, որ հայրն ես որբերուն, խնայէ՛ ինծի, որ անկարար եմ դարիքով ու միտքով:

Կը վախնամ այն կամակոր եւ թունալից Օձէն, որ չըլլա՛յ թէ անոր խածնող ժանիքներուն դակ իյնամ իմ դիւրագայթ բնութեանս, մարդաշ դարիքիս եւ մտքիս խակութեան պատճառով: Փրկէ՛ զիս, Տէր, քու անյաղթելի զօրութեանդ վախը ձգելով անոր վրայ, եւ կարարեալ դարձուր զիս մարմնով, հոգիի քաջութիւն դուր, հասդարագուն նկարագիր եւ քեզի ընդունելի կեանք մը, ինչպէս որ դուն՝ բարեսէրդ կը կամենաս:

Աշխարհիկ բաներէն վե՛ր բարձրացուր իմ միտքս, եւ իմ հոգիէս հեռացուր անոնց բաղձանքը: Թող մտքիս աչքերը խաւարի՛ն անոնց դեսքին քաշողութեան դիմաց, որպէսզի քու պարգետ եղող աչքերուս ամբողջ կորովով միայն քե՛զ դեսնեմ, ով անիմանալի Լոյս, եւ քեզմո՛վ ցնծամ՝ դրդմութեան նշոյլ չունեցող եւ անանց ուրախութեամբ:

Երիտասարդութիւնս քեզմով եւ քու սիրո՛վդ թող լեցուի, իմ կարարելութիւնս քեզմո՛վ թող փառաւորուի, ծերութիւնս քեզմո՛վ թող հարսդանայ, մահս քեզմով

թող կենդանութեա՞ն վերածուի, եւ իմ ամբողջ կեանքիս
մատակարարն ու վայելուչ կարգաւորողը դո՛ւն եղիր:

Տե՛ս, մարդասէր, իմ պաղապանքս, լսէ՛ շրթներէս
դուրս եկած աղօթքը, պարգեւէ՛ խնդրանքս: Զիս
դադարկ մի՛ արձակեր քու ներկայութենէդ, ո՛վ
առարապարգեւ Թագաւոր: Այս աղօթքս կափարէ եւ
զարդարէ՛ իմ անզարդութիւնս, որպէսպի երբեք քեզմէ
չհեռանամ, եւ պարենաւորուած ըլլամ ամէն բարի
պարգեւներով: Եւ արժանի ըլլամ փառաւորելու քեզ՝
Միածին Որդիիդ եւ Սուրբ Հոգիիդ հետ միասին, այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յովհաննէս Սարկաւագ Վարդապետ